Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
հոկտեմբերի 29-ի նիստի N 48
արձանագրային որոշման

**ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ No. 1673Բ**

# ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՎ
## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՊԵԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
## ՄԻՋԵՎ

**ԱՄՍԱԹԻՎ**

**Սեպտեմբերի 3, 2015 թ.**

# ՄԶՕՀ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՊԵԿ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ կնքված 2015 թ. սեպտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության («Փոխառու») և «Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի» («ՄԶՕՀ») միջև:

Հաշվի առնելով, որ Փոխառուն դիմել է ՄԶՕՀ՝ ստանալու փոխառություն Հավելված 1-ում նկարագրված Ծրագրի մասնակի ֆինանսավորման համար,

հաշվի առնելով նաև, որ ՄԶՕՀ-ը հաստատել է քսանհինգ միլիոն ԱՄՆԴ ($25,000,000) գումարով փոխառության տրամադրումը Փոխառուին՝ ներքոհիշյալ դրույթների և պայմանների համաձայն,

Այսպիսով, սույն Փոխառության համաձայնագրի («Համաձայնագիր») կողմերը համաձայնում են հետևյալի շուրջ.

Հոդված 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01 Ստորև սահմանված Ընդհանուր պայմանները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

1.02 Ի հավելումն նախաբանում սահմանված դրույթների՝ հետևյալ դրույթները և արտահայտությունները կրում են հետևյալ նշանակությունը, կամ եթե դրանք կրկնում են Ընդհանուր

պայմանների դրույթները և արտահայտությունները, հետևյալ հատուկ նշանակությունները.
ա) «Փոխառուի լիազոր ներկայացուցիչ» նշանակում է Փոխառուի Ֆինանսների նախարարը,

բ) «Փակման ամսաթիվ» նշանակում է 2019 թ. դեկտեմբերի 31-ը:

գ) «Դոլար» կամ «$» նշանը նշանակում են և վերաբերում Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինական արժույթին:

դ) «Թույլատրելի ծախսերի կատարման սկզբնաժամկետ» նշանակում է 2014 թ. դեկտեմբերի 16-ը:

ե) «Իրականացնող գործակալություն» նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ:

զ) «Ընդհանուր պայմաններ» նշանակում է պետական կառավարման ոլորտում փոխառության համաձայնագրերի հանդեպ կիրառվող ՄԶՕՀ Ընդհանուր պայմանները (դեկտեմբեր, 2007 թ.):

է) «Արտոնյալ ժամկետ» նշանակում է սեպտեմբերի 3-ից սկսած և այդ Ամսաթվից հինգ (5) տարի հետո ավարտվող ժամանակահատվածը:

***

Հոդված 2
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

2.01 ՄԶՕՀ-ը համաձայն է տրամադրել Փոխառուին, և Փոխառուն համաձայն է ստանալ ՄԶՕՀ-ից քսանհինգ միլիոն ԱՄՆԴ ($25,000,000) Փոխառություն՝ սույն Համաձայնագրով սահմանված դրույթներին և պայմաններին համապատասխան:

2.02 Փոխառուն կվճարի տոկոսագումար տարեկան երկու ամբողջ յոթանասունհինգ տոկոս (2.75%) տոկոսադրույքով՝ Փոխառության օգտագործված մայր գումարի և մնացորդի նկատմամբ:

2.03 Փոխառուն կվճարի տարեկան մեկ տոկոս (1%) փոխառության սպասարկման վճար՝ Փոխառության օգտագործված մայր գումարի և մնացորդի նկատմամբ:

2.04 Տոկոսագումարը և սպասարկման վճարը կվճարվեն կիսամյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին և սեպտեմբերի 15-ին, ՄԶՕՀ-ի հաշվեհամարին:

2.05 Արտոնյալ ժամկետի ավարտից անմիջապես հետո Փոխառուն կմարի Փոխառության մայր գումարը ԱՄՆԴ-ով կամ ՄԶՕՀ-ի ղեկավարության համար ընդունելի որևէ այլ ազատ փոխարկելի արժույթով, ԱՄՆԴ-ին համարժեք գումարի չափով՝ մարման պահին և վայրում գերակայող շուկայական փոխարժեքին համապատասխան: Փոխառության մարումը կիրականացվի երեսուն (30) կիսամյակային մարումներով՝ Հավելված 3-ում (Փոխառության մարման ժամանակացույց) սահմանված գումարի չափին և ամսաթվին համապատասխան:

***

Հոդված 3

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

3.01 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի՝ 3.02 կետի համաձայն, երբ ՄԶՕՀ կներկայացվի հետևյալը.

ա) բավարար փաստեր, որ սույն Համաձայնագրի կատարումը և փոխանցումը Փոխառուի անունից պատշաճորեն լիազորվել է և վավերացվել՝ Փոխառուի սահմանադրական պահանջներին համապատասխան, և

բ) Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարի կողմից տրված վկայագիր՝ հաստատելու, որ սույն Համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորվել և վավերացվել է Փոխառուի կողմից՝ կազմելով Փոխառուի վավեր և պարտադիր պարտավորությունը՝ ըստ դրանում սահմանված դրույթների:

3.02 Կետ 3.01-ում սահմանված պայմանները բավարար կերպով իրականացնելուց անմիջապես հետո սույն Համաձայնագիրը կմտնի ուժի մեջ՝ Ուժի մեջ մտնելու ամսաթվով:

3.03 Եթե սույն Համաձայնագիրն ուժի մեջ չմտնի Համաձայնագրի ամսաթվից հետո իննսուն (90) օրվա ընթացքում, Համաձայնագիրը և կողմերի՝ դրանից բխող բոլոր պարտավորությունները կդադարեցվեն, եթե ՄԶՕՀ-ի ղեկավարությունը ձգձման պատճառները դիտարկելուց հետո այս Բաժնի նպատակների կատարման համար ավելի ուշ ամսաթիվ չնշանակի:

***

Հոդված 4
ՀԱՍՑԵՆԵՐԸ

4.01 Կողմերի հասցեներն են.

Փոխառու՝
Ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան 1, Երևան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ֆաքս. (++374-1) 1 800132

ՄԶՕՀ՝

Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամ
Փարքրինգ 8
A-1010 Վիեննա
ԱՎՍՏՐԻԱ
Ֆաքս. (++43-1) 513 92 38

***

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ No. 1673P

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ վերոհիշյալի՝ սույն Համաձայնագրի կողմերը, հանդես գալով պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը և Վիեննա ներկայացրին դրա երկու օրինակները անգլերեն լեզվով, մեկ (1) օրինակը ՄԶՕՀ-ի և մեկ (1) օրինակը Փոխառուի համար, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ և նույնական և ուժի մեջ է մտնում վերոնշյալ ամսաթվին:

ՓՈԽԱՌՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ

Ստորագրություն՝

Անուն՝ Գագիկ Խաչատրյան

Պաշտոն՝ Ֆինանսների նախարար

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՊԵԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՈՒՆԻՑ

Ստորագրություն՝

Անուն՝ Սուլեյման Ջ. Ալ-Հերբիշ

Պաշտոն՝ Գլխավոր տնօրեն

***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1
## ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է նվազեցնել աղքատությունը Հայաստանի գյուղական տարածքներում՝ իրականացնելով հետևյալ գործառնությունները. ա) բարձրացնել փոքրածավալ հողագործության արդյունավետությունը, նպաստել հետարտադրական գործընթացներին և բարձրարժեք, ապրանքային մշակաբույսերի աճեցմանը, բ) կապ հաստատել ագրո-վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունների և աղքատ, գյուղական մանր սեփականատերերի միջև՝ վերջիններիս համար մուտքը ներքին ու միջազգային շուկաներ հասանելի դարձնելու և արժեշղթայի ներսում աշխատանք ունենալու հնարավորությունները մեծացնելու նպատակով, գ) նպաստել, որպեսզի գյուղատնտեսական արտադրական համակարգերը հնարավորինս քիչ ազդեցություն կրեն անձրևի տեղումների մակարդակի տատանումներից, դ) բարձրացնել սննդի անվտանգությունը և դյուրավաճառ արտադրանքի որակը, ինչպես նաև նպաստել մարդկանց առողջության բարելավմանը՝ կարգավորելով տնային տնտեսություններում ջրի մատակարարումը:

Ծրագրի շրջանակում նախատեսված են հետևյալ բաղադրիչները.

### 1. Գյուղական ֆինանսավորման կառույց (ԳՖԿ)

Այս բաղադրիչը նպատակաուղղված է մանր սեփականատերերին և ՓՄՁ-ներին ֆինանսական աջակցության տրամադրմանը՝ նրանց

արտադրական գործառնությունները բարելավելու և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ինչի արդյունքում կմեծանա նաև նրանց եկամուտների և գործառնությունների ծավալը: Բաղադրիչը կներգրավի ֆինանսական նոր գործիքակազմ՝ տեխնիկական աջակցության համար տրամադրվող դրամաշնորհային ֆինանսավորումը լրացնելու նպատակով:

## 2. Գյուղական տարածքների ջրային ենթակառուցվածքներ (ԳՏՋԵ)

Այս բաղադրիչը նպատակաուղղված է ոռոգման բաշխման ցանցերի և համայնքներում ջրամատակարարման համակարգերի բարելավմանը: Ըստ այս մոտեցման՝ ծրագրային գործառնությունները կընտրվեն Ծրագրի իրականացման ընթացքում տարեկան կտրվածքով՝ Ծրագրի փաստաթղթերով սահմանված չափանիշների, ինչպես նաև մասնակից համայնքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

Բաղադրիչն ունի հետևյալ ենթաբաղադրիչները.

ա) Գյուղական համայնքների ջրամատակարարում: Համագործակցելով ջրային ռեսուրսների կառավարման ընկերությունների հետ՝ այս ենթաբաղադրիչի միջոցով կտրամադրվի խմելու ջուր՝ տնային տնտեսությունների և անասունների ջրի պահանջը բավարարելու, ինչպես նաև հիմնական բնամթերք արտադրելու նպատակով:

բ) Ոռոգման բաշխման փոքր և միջին համակարգեր: Այս ենթաբաղադրիչի շրջանակում աջակցություն կտրվի երրորդ կարգի ոռոգման բաշխման ցանցերի զարգացմանը՝ ֆինանսավորելով ոռոգման ենթակառուցվածքների կառուցման կամ վերականգման

աշխատանքները, ինչպես նաև թարմացնելով գոյություն ունեցող սխեմաները՝ փոքր, մասնավոր հողակտորներին ծառայեցնելու նպատակով:

### 3. Ֆերմերների իրազեկում և աջակցություն

Այս բաղադրիչը նախագծվել է՝ տրամադրելու տեխնիկական աջակցություն և ուսուցում հետևյալ նպատակներով. ա) սոցիալական և գյուղատնտեսական գնահատում, բ) ֆերմերների իրազեկության բարձրացում և հնարավորությունների ընդլայնում, գ) խորհրդատվական ծառայություններ և ուսուցում, այդ թվում՝ շուկայավարման, ագրո-վերամշակման և գյուղատնտեսության վարման լավագույն մեթոդների կիրառման թեմաները, դ) բիզնեսի և ֆինանսական պլանավորման ուսուցում:

### 4. Ծրագրի կառավարումը

Ծրագրի կառավարման և իրականացման ընդհանուր պատասխանատվությունը կրում է Ղեկավար խորհուրդը, որը հաշվետու է ՀՀ վարչապետին: Ծրագրի ամենօրյա կառավարման ու իրականացման պատասխանատվությունը կրում է գործող Ծրագրերի իրականացման գրասենյակը (ԾԻԳ):

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 2
## ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

1. Եթե այլ կերպ համաձայնեցված չէ Փոխառուի և ՄԶՕՀ-ի ղեկավարության միջև, ստորև բերված աղյուսակը սահմանում է բաղադրիչները, որոնք ֆինանսավորվելու են Փոխառության միջոցներով, յուրաքանչյուր բաղադրիչին հատկացվող Փոխառության գումարը, ինչպես նաև յուրաքանչյուր բաղադրիչի համար հատկացվող ընդհանուր ծախսի տոկոսաչափը:

| Բաղադրիչ | Փոխառության հատկացված գումարը (արտահայտված ԱՄՆԴ-ով) | Ֆինանսավորվելիք ընդհանուր ծախսերի տոկոսաչափը |
|---|---|---|
| 1. Գյուղական ֆինանսավորման կառույց | -- | -- |
| 2. Գյուղական տարածքների ջրային ենթակառուցվածքներ | 22,770,000 | 100 առանց հարկերի |
| 3. Ֆերմերների իրազեկություն և աջակցություն | -- | -- |
| 4. Ծրագրի կառավարում | 2,230,000 | 100 առանց հարկերի |
| Ընդամենը՝ | 25,000,000 | |

2. Անկախ վերոհիշյալ կետ 1-ում սահմանված Փոխառության գումարի հատկացումից կամ տեղաբաշխված տոկոսաչափերից, եթե ՄԶՕՀ-ի ղեկավարությունը հիմնավոր կերպով հաշվարկի, որ Փոխառության հատկացված գումարը որևէ բաղադրիչի համար բավարար չի լինի՝ ֆինանսավորելու այդ բաղադրիչի բոլոր ծախսերի համաձայնեցված տոկոսաչափը, ապա ՄԶՕՀ-ի ղեկավարությունը, ծանուցելով Փոխառուին, կարող է. ա) վերաբաշխել այլ բաղադրիչով հատկացված Փոխառության գումարները տվյալ բաղադրիչի համար՝ այն գումարի չափով, որը բավարար է հաշվարկված պակասորդը ծածկելու համար, և որը, ՄԶՕՀ-ի ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ չէ՝ այլ ծախսերի համար, և բ) եթե այդ վերաբաշխումը չի կարող ամբողջովին ծածկել հաշվարկված պակասորդը, նվազեցնել այդ ծախսերի հանդեպ կիրառվող տեղաբաշխման տոկոսաչափը, որպեսզի հնարավոր լինի շարունակել հետագա մասհանումներն այդ բաղադրիչի շրջանակում՝ քանի դեռ չեն կատարվել այդ բաղադրիչով նախատեսված բոլոր ծախսերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | Մարման ամսաթիվ | Մարման ենթակա գումար (արտահայտված ԱՄՆԴ-ով) |
|---|---|---|
| 1 | սեպտեմբերի 15, 2020 թ. | 833,330 |
| 2 | մարտի 15, 2021 թ. | 833,330 |
| 3 | սեպտեմբերի 15, 2021 թ. | 833,330 |
| 4 | մարտի 15, 2022 թ. | 833,330 |
| 5 | սեպտեմբերի 15, 2022 թ. | 833,330 |
| 6 | մարտի 15, 2023 թ. | 833,330 |
| 7 | սեպտեմբերի 15, 2023 թ. | 833,330 |
| 8 | մարտի 15, 2024 թ. | 833,330 |
| 9 | սեպտեմբերի 15, 2024 թ. | 833,330 |
| 10 | մարտի 15, 2025 թ. | 833,330 |
| 11 | սեպտեմբերի 15, 2025 թ. | 833,330 |
| 12 | մարտի 15, 2026 թ. | 833,330 |
| 13 | սեպտեմբերի 15, 2026 թ. | 833,330 |
| 14 | մարտի 15, 2027 թ. | 833,330 |
| 15 | սեպտեմբերի 15, 2027 թ. | 833,330 |
| 16 | մարտի 15, 2028 թ. | 833,330 |

| | | |
|---|---|---|
| 17 | սեպտեմբերի 15, 2028 թ. | 833,330 |
| 18 | մարտի 15, 2029 թ. | 833,330 |
| 19 | սեպտեմբերի 15, 2029 թ. | 833,330 |
| 20 | մարտի 15, 2030 թ. | 833,330 |
| 21 | սեպտեմբերի 15, 2030 թ. | 833,330 |
| 22 | մարտի 15, 2031 թ. | 833,330 |
| 23 | սեպտեմբերի 15, 2031 թ. | 833,330 |
| 24 | մարտի 15, 2032 թ. | 833,330 |
| 25 | սեպտեմբերի 15, 2032 թ. | 833,330 |
| 26 | մարտի 15, 2033 թ. | 833,330 |
| 27 | սեպտեմբերի 15, 2033 թ. | 833,330 |
| 28 | մարտի 15, 2034 թ. | 833,330 |
| 29 | սեպտեմբերի 15, 2034 թ. | 833,330 |
| 30 | մարտի 15, 2035 թ. | 833,430 |
| | Ընդամենը | 25,000 000 |

***